

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻԶԵՎԱՆԻ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

27.01.2017թ. ք. Իջևան

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 35 անդամներից 29-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ս. Ա. Առաքելյանը:

Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ԵՊՀ ԻՄ-ում «Գիտություն -2016» դասախոսական հարցման արդյունքների վերլուծության մասին:

Զեկուցող՝ տնօրեն Ս.Ա. Առաքելյան

2. Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ 2015-2016 ուստարվա ուսանողական հարցումների արդյունքների մասին:

Զեկուցող՝ տնօրեն Ս.Ա. Առաքելյան

3. ԵՊՀ ԻՄ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների կանոնակարգը հաստատելու մասին:

Զեկուցող՝ տնօրեն Ս.Ա. Առաքելյան

4. Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի բակալավրիատի շրջանավարտներին մանկավարժի որակավորում շնորհելու կանոնակարգը հաստատելու մասին:

Զեկուցող՝ տնօրեն Ս.Ա. Առաքելյան

5. Ընթացիկ հարցեր

- 5.1. ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի կանոնադրության հաստատումը:
- 5.2. ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի ֆրանսերեն լեզվի և գրականության ամբիոնի կանոնադրության հաստատումը:
- 5.3. ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի կանոնադրության հաստատումը:
- 5.4. ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի կանոնադրության հաստատումը:
- 5.5. ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի կանոնադրության հաստատումը:
- 5.6. ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի կանոնադրության հաստատումը:
- 5.7. ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի կանոնադրության հաստատումը:
- 5.8. ԵՊՀ ԻՄ-ի տնտեսագիտության տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի կանոնադրության հաստատումը:
- 5.9. ԵՊՀ ԻՄ-ի տնտեսագիտության ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի կանոնադրության հաստատումը:
- 5.10. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի դեկան, «Ընդհանուր բնագիտություն և մաթեմատիկա» ամբիոնի դոցենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Մանվել Աշոտի Զաքարյանին ԵՊՀ գիտական խորհրդում դոցենտի գիտական կոչում ստանալու համար երաշխավորելու և միջնորդելու մասին:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց, և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

Օրակարգի առաջին՝ «ԵՊՀ ԻՄ-ում «Գիտություն -2016» դասախոսական հարցման արդյունքների վերլուծության մասին» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի նախագահ, տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը. «Իդեալականորեն բուհական դասախոսի աշխատանքային համակարգաստեղծ երկու առանցքային հատկանիշներն են դասավանդումը և գիտական գործունեությունը: Մնացած կողմերը՝ ներբուհական հասարակական գործունեություն, արտաբուհական սոցալական ակտիվություն, ոչ պաշտոնական հարաբերություններում տարբեր դերեր և այլն ածանցյալ են տվյալ հատկանիշներից այն իմաստով, որ, լավագույն դեպքում պետք է ծառայեն դրանց արդյունավետ իրագործմանը: Ըստ որում, տեսականորեն շատ դժվար է այդ երկու հատկանիշների միջև կարևորության խնդիր դնել: Այն պատճառով, որ ճանաչողության և հասարակությունների զարգացման ժամանակակից տեմպերը, համընդհանուր միտումներին հարմարվելու, դրանց հետ ներդաշնակվելու ազգապետական և քաղաքակրթական առանձնահատկությունները, տվյալ գործընթացներով և ինքնազարգացման անհրաժեշտությամբ պարտադրված կրթական համակարգերի բարեփոխումների համատեքստում՝ արդյունավետ ուսուցմանը օժանդակող գիտական գործունեությունը դարձնում են դասավանդման հետ հավասար կարևոր: Ուսուցման գործընթացում հենց դասախոսի գիտական այն աշխատանքների արդյունքների օգտագործումն է գիտելիքների ու հմտությունների ձեռքբերումը դարձնում ավելի զգայելի ու արդյունավետ, որոնք առնչվում են առարկայական ծրագրի բովանդակության հետ: Թեկուզ տարբեր չափով ու յուրովի, դա վերաբերվում է կրթական ծրագրում ներառված գրեթե բոլոր առարկաներին:

Սակայն, գաղտնիք չէ, որ իդեալականության հետ համեմատած իրականությունը փոքր ինչ այլ է: Հայտնի ու անհայտ մի շարք առարկայական ու անձնական գործոնների պատճառով, բուհական պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի գիտական գործունեությունը շատ բուհերում լիարժեքորեն չի կատարում այն ցանկալի դերը, որը, կրթական ծրագրերի արդյունավետ իրագործման հարցում վերագրված է իրեն: Մասնավորաբար, ի՞նչն է դրան խոչընդոտում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում, այն դեպքում, երբ ղեկավարությունը դա համարժեքորեն կարևորում է և իրապես ու գործնականորեն պատրաստ է կարելվույն օժանդակելու տվյալ խնդրի լուծման գործում: Այն բազմաթիվ անգամներ քննարկվել և հավաստվել է տնօրենության ու գիտխորհրդի նիստերում, ֆակուլտետային ու ամբիոնային պաշտոնական հանդիպումների ընթացքում: Դրա ապացույցներից է նաև այն հարցումը, որը կապված է պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական գործունեության հետ և որը, 2016 թվականի մայիս-հունիս ամիսներին անց է կացվել մասնաճյուղի ՄԿՈԱ բաժնի կողմից»: (Ամբողջական վերլուծությունը տես հավելված 1-ում):

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանը, ՄԿՈԱ բաժնի վարիչ Մ. Ճաղարյանը: Նրանք կարևորեցին դասախոսական հարցման արդյունքների օբեկտիվ վերլուծությունը և դրանից արվող ճիշտ հետևությունները, որոնք պետք է առավելագույնս խթանեն մասնաճյուղում պրոֆեսորադասախոսական կազմի գիտական գործունեությունը, որը իր հերթին անմիջականորեն կարող է ազդել ԵՊՀ ԻՄ-ում դասավանդան որկաի արդյունավետության բարձրացման վրա:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն

Որոշում N 21/1

1. Հարցման արդյունքների մասին իրազեկել պրոֆեսորադասախոսական անձնակազմին՝ ամբիոնների ընդհանուր ժողովներում:

Օրակարգի երկրորդ՝ - «Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ 2015-2016 ուստարվա ուսանողական հարցումների արդյունքների մասին» հարցի կապակցությամբ լսեցին Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Նա ներկայացրեց 2015-2016 ուստարվա 1-ին և 2-րդ կիսամյակների ֆակուլտետների, դեկանների և դեկանի տեղակալների, դեկանատի գործավարների և ամբիոնների միջին գնահատականները.

Ֆակուլտետների միջին գնահատականները

Ֆակուլտետ	2015-2016	
	1-ին կիս.	2-րդ կիս.
Բնական գիտությունների	4,56	4,62
Տնտեսագիտության	4,66	4,78
Հումանիտար գիտությունների	4,58	4,63
Կիրառական արվեստի	4,76	4,86

Դեկանների և դեկանի տեղակալների միջին գնահատականները

Ֆակուլտետ	2015-2016	
	1-ին կիս.	2-րդ կիս.
Բնական գիտությունների	4,82	4,81
Տնտեսագիտության	4,73	4,89
Հումանիտար գիտությունների	4,85	4,71
Կիրառական արվեստի	4,85	4,93

Դեկանատի գործավարի միջին գնահատականը

Ֆակուլտետ	2015-2016	
	1-ին կիս.	2-րդ կիս.
Բնական գիտությունների	4,64	4,72
Տնտեսագիտության	4,85	4,88
Հումանիտար գիտությունների	4,88	4,78
Կիրառական արվեստի	4,82	4,93

Ամբիոնների միջին գնահատականներն ըստ ուստարիների և կիսամյակների

Ամբիոնի անունը	2015-2016	
	1-ին կիս.	2-րդ կիս.
Գծանկարի, գունանկարի և քանդակի	4,79	4,86
Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի	4,75	4,87
Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության	4,64	4,75
Ընդհանուր տնտեսագիտության	4,71	4,85
Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների	4,38	4,48
Հայոց լեզվի և գրականության	4,54	4,60
Հայոց պատմության և հասարակագիտության	4,63	4,67
Մանկավարժության և հոգեբանության	4,63	4,61
Տուրիզմի կառավարման և մշակութաբանության	4,60	4,69
Օտար լեզուների	4,54	4,63

Նա նշեց, որ ամենացածր միջին գնահատական ստացել են ֆակուլտետներից՝ Բնական գիտությունների ֆակուլտետը, ամբիոններից՝

Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնը, իսկ ամենաբարձր միջին գնահատակն համապատասխանաբար Կիրառական արվեստի ֆակուլտետը, Գծանկարի, գունանկարի և քանդակի ինչպես նաև Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնները: Նշվեց, որ առավել մանրամասն արդյունքները կներկայացվեն համապատասխան ֆակուլտետներում և ամբիոններում, ստացված արդյունքները հնարավորինս արդյունավետ օգտագործելու համար:

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ-ի տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Ն. Խուդավերդյանը, բնական գիտությունների ֆակուլտետի դեկան Մ. Զաքարյանը, կիրառական արվեստի ֆակուլտետի դեկան Ա. Մարգարյանը և հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Ա. Ներսիսյանը: Նրանք կարևորեցին հարցման արդյունքներից ճիշտ հետևություններ անելու հանգամանքը, որը հնարավոր կլինի միայն ֆակուլտետներում առավել մանրամասն ուսումնասիրությունից հետո:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն

Որոշում N 21/2

1. Ընդունել ի գիտություն:

Օրակարգի երրորդ՝ - «ԵՊՀ ԻՄ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների կանոնակարգը հաստատելու մասին» հարցի կապակցությամբ լսեցին տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Նա հանգամանալից ներկայացրեց նախագիծը /Հավելված 2/, նշելով, որ համապատասխան փոփոխությունների անհրաժեշտությունն առաջացել է ԵՊՀ-ի համապատասխան կանոնակարգում փոփոխություններ կատարելուց հետո:

Մասնավորապես նշվեց, որ այսուհետ ուսանողների հարցումն իրականացվելու է առցանց եղանակով, որի համար անհրաժեշտ է, որ ԵՊՀ ԻՄ-

ի ուսանողները կարողանան օգտվել ԵՊՀ-ի ուսանողական անհատական վիրտուալ տիրույթից, ունենան անհատական համալսարանական էլեկտրոնային փոստ: Հարցումներն անց են կացվելու յուրաքանչյուր կիսամյակի քննաշրջանից հետո հետևյալ ժամանակահատվածներում.

1-ին կիսամյակից հետո՝ փետրվարի 5-ից մինչև փետրվարի 20-ը՝ առկա ուսուցմամբ սովորողների համար և մարտի 10-ից մինչև մարտի 25-ը՝ հեռակա ուսուցմամբ սովորողների համար,

2-րդ կիսամյակից հետո՝ հուլիսի 1-ից մինչև սեպտեմբերի 7-ը և՛ առկա, և՛ հեռակա ուսուցմամբ սովորողների համար:

Ավարտական կուրսերում հարցումն անցկացվելու է ապրիլի 10-ից մինչև ապրիլի 17-ը՝ առկա ուսուցմամբ սովորողների համար և մայիսի 8-ից մինչև մայիսի 15-ը՝ հեռակա ուսուցմամբ սովորողների համար:

Ուսանողների հարցման արդյունքները մշակվելու են ԵՊՀ-ի տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոնում, արդյունքները ուղարկվում է ԵՊՀ ԻՄ ուսումնասամթողական մասն, որն էլ իր հերթին կբաշխի այն ըստ ֆակուլտետների:

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ ուսումնասամթողական վարչության պետ Ա. Դավթյանը, ՄԿՈԱ բաժնի վարիչ Մ. Ճաղարյանը: Ելույթ ունեցողները կարևորեցին կատարված փոփոխությունները, նշելով, որ հարցման առցաց ացկացումը հնարավորություն կտա խնայել և նյութական միջոցներ, և ժամանակ, ինչպես նաև կլինեն առավել օբյեկտիվ:

Որոշեցին

Որոշում 21/3

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի

կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների կանոնակարգը՝ համաձայն հավելված 2-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Օրակարգի չորրորդ՝ - «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի բակալավրիատի շրջանավարտներին մանկավարժի որակավորում շնորհելու կանոնակարգը հաստատելու մասին» հարցի վերաբերյալ լսեցին տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը:

Նշվեց, որ բակալավրիատի շրջանավարտներին մանկավարժի որակավորման շնորհումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2015թ. հուլիսի 3-ի թիվ 647-Ա/Բ հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների կրթական ծրագրերի համաձայն, իսկ ուսուցումը կազմակերպվում է «Կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման օրինակելի կարգի»-ի պահանջներին համապատասխան, մանկավարժի որակավորում ստանալու համար կազմակերպվող դասընթացներին ուսանողները մասնակցում են կամավորության սկզբունքով՝ ՀՀ ԿԳ նախարարության հետ համաձայնեցված մասնագիտությունների ցանկի հիման վրա: Բակալավրիատի շրջանավարտներին մանկավարժի որակավորում շնորհելու համար ԵՊՀ ԻՄ-ում կիրարկվում է «240 կրեդիտ+30 կրեդիտ» համակարգը, համաձայն որի մանկավարժի որակավորում ստացող ուսանողների համար նախատեսվում է 30 կրեդիտ ծավալով մանկավարժական լրացուցիչ կրթաբլոկ:

Մանկավարժի որակավորում ստանալու համար ուսանողները բակալավրիատի 1-ին կուրսի 2-րդ կիսամյակում պետք է գրանցվեն մանկավարժական կրթաբլոկի ծրագրում՝ դիմում ներկայացնելով

Ֆակուլտետի դեկանատ մինչև տվյալ ուսումնական տարվա ապրիլի 1-ը: Դիմում ներկայացրած ուսանողների հետ մեկ ամսվա ընթացքում կնքվում է պայմանագիր: Մանկավարժական կրթաբլոկով ծրագրի ուսումնառությունը կազմակերպվում է 3-8-րդ կիսամյակներում: Մանկավարժական կրթաբլոկի դասընթացները կազմակերպվում են վճարովի հիմունքներով:

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանը, բնական գիտությունների ֆակուլտետի դեկան Մ. Զաքարյանը, հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Ա. Ներսիսյանը, տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ն. Խուդավերդյանը: Ելույթ ունեցողները կարևորեցին նախագծի հետևյալ կետերը.

2.5 Մանկավարժական կրթաբլոկի մոդուլից անբավարար գնահատական ստանալը չի սահմանափակում հիմնական մասնագիտության շրջանակում փոխատեղման մրցույթին մասնակցելու կամ ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում ստանալու ուսանողի իրավունքը:

2.6 Մանկավարժական կրթաբլոկի «Մանկավարժություն» առարկայի ամփոփիչ քննությունը չհանձնելու դեպքում ուսանողը ստանում է հիմնական մասնագիտության գծով դիպլոմ՝ առանց մանկավարժի որակավորման:

2.7 Երևանի պետական համալսարանի բակալավրիատի կրթական ծրագրի «240 կրեդիտ + 30 կրեդիտ» մանկավարժական դասընթացների կրթաբլոկով ուսումնառության ավարտին շնորհվում է երկու որակավորում՝ բակալավրի աստիճան՝ հիմնական մասնագիտության գծով և մանկավարժի որակավորում:

Որոշեցին

Որոշում 21/4

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի

պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի բակալավրիատի շրջանավարտներին մանկավարժի որակավորում շնորհելու կանոնակարգը՝ համաձայն հավելված 3-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ընթացիկ հարցեր

Լսեցին հետևյալ հարցերի մասին.

- 5.1 ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի կանոնադրության հաստատումը:
- 5.2 ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի ֆրանսերեն լեզվի և գրականության ամբիոնի կանոնադրության հաստատումը:
- 5.3 ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի կանոնադրության հաստատումը:
- 5.4 ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի կանոնադրության հաստատումը:
- 5.5 ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի կանոնադրության հաստատումը:
- 5.6 ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի կանոնադրության հաստատումը:

5.7 ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի կանոնադրության հաստատումը:

5.8 ԵՊՀ ԻՄ-ի տնտեսագիտության տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի կանոնադրության հաստատումը:

5.9 ԵՊՀ ԻՄ-ի տնտեսագիտության ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի կանոնադրության հաստատումը:

Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ այս կանոնադրությունների հաստատումը ԵՊՀ ԻՄ-ի և ԵՊՀ ԻՄ-ի ֆակուլտետների նոր կանոնադրությունների հաստատման տրամաբանական շարունակությունն է, որը շատ կարևոր հանգամաք է մասնաճյուղի ուսումնական գործընթացի օպտիմալ կազմակերպման համար: Նա նշեց, որ ներկայացվող կանոնադրությունները կազմվել են հիմք ընդունելով ԵՊՀ ԻՄ-ի ամբիոնների կանոնակարգերը, մշակվել և վերջնական տեսքի է բերվել Մ. Աթոյանի և Վ. Ավագյանի կողմից: Կանոնադրությունները քննարկվել է նաև ԵՊՀ ԻՄ-ի իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովի կողմից:

Որոշեցին

Որոշում 21/5

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետի

մանկավարժության և հոգեբանության ամբիոնի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 4-ի:

2. Ուժը կորցրած ճանաչել 2012թ. նոյեմբերի 10-ին Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից հաստատված Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի կանոնակարգը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Որոշում 21/6

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետի ֆրանսերեն լեզվի և գրականության ամբիոնի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 5-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Որոշում 21/7

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի

կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետի անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 6-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Որոշում 21/8

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 7-ի:
2. Ուժը կորցրած ճանաչել 2012թ. նոյեմբերի 10-ին Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից հաստատված Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի կանոնակարգը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Որոշում 21/9

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 8-ի:
2. Ուժը կորցրած ճանաչել 2014թ. սեպտեմբերի 17-ին Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից հաստատված Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի կանոնակարգը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Որոշում 21/10

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի

ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 9-ի:

2. Ուժը կորցրած ճանաչել 2014թ. սեպտեմբերի 17-ին Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից հաստատված Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի կանոնակարգը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Որոշում 21/11

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 10-ի:
2. Ուժը կորցրած ճանաչել 2014թ. սեպտեմբերի 17-ին Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից հաստատված Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի կանոնակարգը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Որոշում 21/12

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի տնտեսագիտության ֆակուլտետի տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 11-ի:
2. Ուժը կորցրած ճանաչել 2012թ. նոյեմբերի 10-ին Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից հաստատված Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի տնտեսագիտության ֆակուլտետի տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի կանոնակարգը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Որոշում 21/13

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի տնտեսագիտության ֆակուլտետի ընդհանուր
Էջ 17 21-ից

տնտեսագիտության ամբիոնի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 12-ի:

2. Ուժը կորցրած ճանաչել 2012թ. նոյեմբերի 10-ին Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից հաստատված Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի տնտեսագիտության ֆակուլտետի ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի կանոնակարգը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

5.10 Լսեցին - «ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ղեկան, ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի դոցենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Մանվել Աշոտի Զաքարյանին ԵՊՀ գիտական խորհրդում դոցենտի գիտական կոչում ստանալու համար երաշխավորելու և միջնորդելու» հարցի մասին ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը:

ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի 2016թ. դեկտեմբերի 26-ի թիվ 5 նիստում քննարկվել է նույն ամբիոնի դոցենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Մանվել Աշոտի Զաքարյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը և հաշվի առնելով հայցողի գիտամանկավարժական գործունեության տվյալները, նրան երաշխավորել է դոցենտի գիտական կոչում շնորհելու համար և դիմել է ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին՝ առաջարկելով միջնորդել ԵՊՀ-ի գիտական խորհրդին՝ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Ս. Ա. Զաքարյանին շնորհել դոցենտի գիտական կոչում:

Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին կից մրցույթային հանձնաժողովը քննարկել է խնդրո առարկա հարցը և ուսումնասիրելով հայցողի անձնական գործի նյութերը՝ արձանագրել է հետևյալը.

ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի դոցենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Մանվել Աշոտի Զաքարյանը ԵՊՀ ԻՄ-ում աշխատում է 1997թ.-ից սկսած, իրականացնում է մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն: Ընդ որում 2002թ.-ին Գերմանիայի Զարլանդի համալսարանում՝ DAAD-ի շրջանակներում այնուհետև 2004-2006թթ.-ին՝ Humboldt ծրագրի շրջանակներում զբաղվել է գիտական գործունեությամբ:

2008-2014թթ. եղել է ԵՊՀ ԻՄ-ի բարձրագույն մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոնի վարիչ, 2015թ. -ից բնական գիտությունների ֆակուլտետի դեկան, հեղինակ է 9 գիտական հոդվածների և մեկ ուսումնամեթոդական ձեռնարկի:

Մանվել Աշոտի Զաքարյանը թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է 1999թ.: Պաշտպանությունից հետո նա հրատարակել է գիտական 3 հոդված և ուսումնամեթոդական 1 աշխատանք, նա համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» N 615 որոշման 2-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում շնորհելը» բաժնի բ. Ենթակետի, որը նախատեսում է դոցենտի գիտական կոչում շնորհել «գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող անձանց, ովքեր գիտական կոչում շնորհող ԲՈՒՀ-ում ունեն գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 3 տարվա ստաժ և վերջին 3 տարվա ընթացքում այդ ԲՈՒՀ-ում իրականացրել են մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն» կարող է հավակնել դոցենտի գիտական կոչման:

Հաշվի առնելով այդ ամենը կարելի է արձանագրել, որ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի դեկան ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի դոցենտ,

Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Մ. Ա. Չաքարյանի տվյալները բավարար են դոցենտի գիտական կոչում ստանալու համար և կարելի է միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին:

Այնուհետև Մ. Ա. Առաքելյանը գիտխորհրդի քննարկմանը դրեց Մ. Ա. Չաքարյանի դոցենտի գիտական կոչում շնորհելու համար ԵՊՀ գիտխորհրդի միջնորդությանը դիմելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Բարձրագույն մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոնի վարիչ ֆ.մ.գ.թ. Ա.Ցուցուլյանը, նույն ամբիոնի ասիստենտ ֆ.մ.գ.թ. Կ.Հովսեփյանը և ֆ.մ.գ.թ. Ա.Մարգարյանը:

Արտահայտվողները նշեցին, որ նա աչքի է ընկնում գիտամանկավարժական և ուսումնամեթոդական աշխատանքների հարուստ փորձով և արհեստավարժությամբ, նրա դասախոսական աշխատանքը բնութագրվում է բարձր մակարդակով և նյութի մատուցման հմտությամբ: Նրանք առաջարկեցին ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի դոցենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Մանվել Աշոտի Չաքարյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու համար միջնորդել ԵՊՀ գիտխորհրդին:

ՈՐՈՇԵՑԻՆ

Որոշում 21/14

Հաշվի առնելով, որ ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի դեկան, ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի դոցենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Մանվել Աշոտի Չաքարյանի գիտամանկավարժական գործունեության տվյալները լիովին համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» N 615 որոշման 2-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում

շնորհելը» բաժնի բ. ենթակետի, ինչպես նաև այդ հարցում նորմատիվային այլ փաստաթղթերի պահանջներին, ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհուրդը որոշում է.

1. Երաշխավորել ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի դեկան, ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի դոցենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Մանվել Աշոտի Զաքարյանին դոցենտի գիտական աստիճան ստանալու համար:
2. Միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի դեկան, ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի դոցենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Մանվել Աշոտի Զաքարյանին շնորհել դոցենտի գիտական կոչում և համապատասխան առաջարկով դիմել ՀՀ ԲՈՀ:

Գիտական խորհրդի նախագահ _____ Ս. Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար _____ Մ.Ս. ԱԹՈՅԱՆ